# ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԲՈՎՅԱՆԻ՝ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳԱՂՈՒԹ-ՀԱՄԱԼԻՐ. ՏՆՕՐՀՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԳԱՂՈՒԹՈՒՄ

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Մայր Աթոռի միաբաններ հոգեշնորհ Տ. Աշոտ աբեղա Մնացականյանի, հոգեշնորհ Տ. Արշակ աբեղա Խաչատրյանի և մի խումբ ազգայինների ընկերակցությամբ, հունվարի 5-ին՝ խաչման օրը, այցելեց Հայաստանի կանանց և անչափահասների աշխատանքային գաղութ-համալիր և կատարեց տնօրհնեք:

Անչափահասների գաղութը (ուր գտնվում են 14-18 տարեկան պատանիներ) նպատակ ունի զանազան հանցագործությունների համար ազատազրկման դատապարտված պատանիներին ապահովել աշխատանքով, որը նաև կնպաստի նրանց հետագա դաստիարակմանը: Գաղութում կան շուրջ 70 պատանիներ, այդ թվում նաև նրանք, ովքեր դեռևս գտնվում են քննչական մեկուսարանում:

Սրբազան Հայրն ու իր ուղեկիցները, կենտրոնի տնօրեն Ցուրի Ջամալյանի առաջնորդությամբ, այցելեցին գաղութի դպրոց, մարզարան, նաշարան, ննջարաններ: Ասենք, որ գաղութն ունի անասնապահական օժանդակ տնտեսություն: Այս ինքնատիպ ագարակի շնորհիվ հոգում են ոչ միայն կանանց և անչափահասների, այլև Հայաստանի մյուս գաղութների կարիքները: Գաղութն ունի գիշերօթիկ դպրոց, ուր դասավանդվում են հայերեն և ռուսերեն լեզուներ, ինչպես նաև հանրակրթական դպրոցներին բնորոշ տարբեր առարկաներ:

Բակում է գտնվում նաև բացօթյա մատուռը, ուր կատարվում են հավատական աղոթքներ և Սուրբ Մկրտության խորհուրդը:

Ազատազրկված կանանց բաժնում վերջին տարում՝ 1998 թ., ծնվել է ութ երեխա, ովքեր մկրտվել են հենց այս մատուռում:

Այցելությունն ամենքին պարգևեց հույսի ու հավատի նշույլներ: Մեսրոպ Սրբազանը, խոսելով տոների խորհրդի մասին, միաժամանակ նկարագրեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ծնունդը, հիշեցրեց, թե ինչպես Աստված սիրեց աշխարհն ու մարդուն, որ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ով Նրան հավատա, չկորչի, այլ՝ հավիտենական կյանք ունենա:

Այնուհետև կատարվեց տնօրհնեքի արարողություն, հավատական աղոթք: Ապա բոլորը միասին երգեցին Հայաստանի Հանրապետության օրհներգը: Վերջում ներկաներն ստացան նվերներ՝ քաղցրավենիք, տաք հագուստներ, կոշիկ... Սրբազան Հայրը հիշեցրեց, որ այս նվերները Դետրոյտից ուղարկել են տեր և տիկին Գալուստ և Էմմա Սողոյանները:

Շեշտելով քարեգործության փաստը՝ Սրբազան Հայրն ասաց. «Աստուած բարի եւ արեւ օրեր շնորհէ այս ամոլին, եւ բոլոր անոնց, որոնք անօթիին ուտելիք տուին, ծարաւին՝ ջուր, օտարին ընդունեցին»՝ համաձայն մեր Տիրոջ խոսքի. «Հիվանդ էի և ինձ այցի եկաք, բանտում էի և ինձ տեսնելու եկաք» (ՄԱՏԹ. ԻԵ 35-36):

*1700-ԱՄՅԱԿԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԼՐԱՏՈՒ*